

1902



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան

«21» 02 2025թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 040 - 25

Նախաձեռնող՝

«Սոլար ինվեստ» ՍՊԸ  
ք. Երևան, Օհանովի փ., 15/1

Գործունեությունը՝

Բաղրամյան համայնքի Լեռնագոգ բնակավայրի  
գործարանային փողոց 26/1 հասցեում արևային  
ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում  
Արմավիրի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 040 - 25

«21» փետրվարի 2025թ.

«Սոլար Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ բնակավայրի գործարանային փողոց 26/1 հասցեում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝

«Սոլար Ինվեստ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագիծ, /«Բ» կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Արմավիրի մարզ, Լեռնագոգ բնակավայր

**Ներածական մաս.** Արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցումը նախատեսվում է իրականացնել «Սոլար Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից՝ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ բնակավայրի Գործարանային փողոց 26/1 հասցեում: Տարածքի հողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի գ) ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Նախատեսվող արևային կայանի նպատակը ֆոտովոլտային արտադրական կայանի կառուցումն է՝ էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2024թ. հունիսի 12-ի, N168-Ա որոշման համաձայն՝ «Սոլար Ինվեստ» ՍՊ ընկերությանը տրամադրվել է 13200 կՎտ տեղակայվող հզորությամբ ԼԷN°0780 էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա՝ մինչև 2046թ. հունիսի 13-ը գործողության ժամկետով: Այն էներգետիկ համակարգի կայունությանը նպաստող ծրագիր է, ինչպես նաև այլընտրանքային էներգետիկայի ոլորտում ներդրում, որը դրական ազդեցություն կունենա երկրում տնտեսական, բնապահպանական, էներգետիկ և ռազմավարական ուղղությունների զարգացման վրա: Արևային կայանը տեղակայված է լինելու «Սոլար Ինվեստ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող՝ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ բնակավայրի վարչական տարածքում՝ 14.82401 հա: Տարածքը հարթ է: Հարակից տարածքներում տեղակայված են արևային ֆոտովոլտային



կայանները, որոնք գտնվում են 25-50 մ հեռավորության վրա: Նախատեսվող արևակայանը գտնվում է Դարալիկ բնակավայրի մոտակա տնից՝ 532 մ, Լեռնագոգ բնակավայրից՝ 2.2 կմ, Սելավ-Մաստարա գետից՝ 95 մ, կանաչ գոտուց (պտղատու այգի)՝ մոտ 50 մ, հանարապետական նշանակության ավտոճանապարհից (<17)՝ 290 մ, երկաթգծից՝ 428 մ, գազատարից՝ մոտ 500 մ հեռավորությունների վրա: Կանաչ գոտին մասնավոր պտղատու այգի է՝ ցանկապատված տարածքով: Նախատեսվում է կառուցել 13200 ՄՎտ հզորության ֆոտովոլտային արևակայան, որի աշխարհագրական կոորդինատներն են՝ հս. լայն. 40°14'3.48"N, արլ. երկայն. 43°53'15.98"E, արևակայանը գտնվում է ծովի մակերևույթից 992 մ բարձրության վրա: Համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի՝ նախատեսվում է կառուցել 13200կՎտ հզորության արևակայան, արևային կայանի տարածքում 2 հատ 6600 կՎԱ հզորության 35/0,8 կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայաններ և ենթակայանի միացումը գոյություն ունեցող 63 ՄՎԱ հզորության 110/35 կՎ տրանսֆորմատորային ենթակայանին: Ենթակայանի 35 կՎ լարման կողմում տեղադրելով նոր 35 կՎ բջիջ:

Գործունեությունն իրականացվելու է Կառավարության 2023 թվականի 21 ապրիլի «Էլեկտրակայանների շահագործման անվտանգության կանոնները հաստատելու մասին» N 583-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Համաձայն հաշվետվության տեղեկատվության՝ ուսումնասիրվող և հարակից տարածքներում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, բացակայում են հազվագյուտ էկոհամակարգերը: Ուսումնասիրվող տարածքի մոտակայքում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ, տարածքն անմիջական սահմաններ չունի ԲՀՊՏ-ների հետ:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կատարվելու են հողային աշխատանքներ՝ կայանի կառուցման ժամանակ արևային վահանակները կող կոնստրուկցիաների հիմքերի համար նախատեսված հորատանցքերի և դեպի ենթակայան տանող ստորգետնյա էլեկտրական գծի անցկացման նպատակով խրամուղիների փորման, օդային գծի և լուսավորության հենասյուների տեղադրման, հողատարածքի ցանկապատման, ենթակայանում տրանսֆորմատորի տեղադրման, յուղընդունիչ հորի կառուցման հողային աշխատանքներ:

Արևային կայանի հետ կապված գործողությունների արդյունքում հանվելու է մոտ 748.66 խմ գրունտ /այդ թվում՝ խրամուղիների և հենասյուների փորման արդյունքում հանվելու է մոտ 130 խմ գրունտ, ենթակայանի և մալուխագծերի կառուցման ժամանակ 95 խմ հողային գրունտն/, որից մոտ 700.66 խմ հողային զանգվածը կատարվելու է հետլիցք, մնացած 48 խմ կհեռացվի համայնքի աղբավայր՝ վերջինիս համաձայնությամբ:

Ընդամենը հանվելու է 878.66 խմ հողային գրունտ, որից 795.66 խմ կատարվելու է հետլիցք, մնացած 83 խմ հեռացվելու է համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով՝ ըստ պահանջի: Ջրցանի և տեխնիկական նպատակով օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով՝ ըստ պահանջի Աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող՝ 3 հատ շարժական 1,0\*1,5 չափերի բիոզուգարաններից՝ լվացարանով: Բիոզուգարանների մաքրումը կատարվելու է մասնագիտական կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Կառուցապատման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, տարածքի



հնարավորինս նախկին տեսքի բերում, օգտագործված ճանապարհների կարգաբերում: Կատարվելու է փոսերի, հենասյուների եզրային մասերի լիցք՝ հողային զանգվածով: Կայանի տեղակայման աշխատանքները տևելու են 2 տարի՝ ըստ ժամանակացույցի:

**Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝**

- արևակայանի, ենթակայանի շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարվելու է գրունտի խոնավացում, անհրաժեշտության դեպքում՝ ճանապարհների ջրցան: Ջրցանը կատարվելու է ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին,
- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կկատարվի փակ ծածկ ունեցող մեքենաներով, իսկ նյութերը տեղափոխող մեքենաները կփակվեն անջրթափանց թաղանթով,
- տարածքում նյութերը կպահվեն ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ,
- շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցները կօգտագործվեն միայն սարքին վիճակում, պարբերաբար կիրականացվեն ստուգումներ:
- արևակայանի և ենթակայանի կառուցման փուլում հանվող հողային զանգվածը կուտակվելու է տարածքում՝ ծածկելով անջրթափանց թաղանթով,
- հողային զանգվածի մի մասն օգտագործվելու է անմիջապես տեղում՝ հետլցման և տարածքի բարեկարգման համար,
- ավելցուկային գրունտը տեղափոխվելու է համայնքի կողմից հատկացված վայր,
- ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավացումը կատարվելու է այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր,
- շինարարության ընթացքում կօգտագործվեն գոյություն ունեցող գրունտային ճանապարհները,
- ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով,
- շինարարական նյութերը տարածք կբերվեն օգտագործումից առաջ, կտեղադրվեն հատուկ տակդիրների, իսկ շինարարական տեխնիկան կայանվելու է շինհրապարակի առանձնացված տեղերում,
- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է մանրախիճ,
- մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փռված մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր, այն փոխարինելով նորով,
- շինարարական տեխնիկայի, լիցքավորումը և սարքավորումների վերանորոգումը կատարել գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում:

Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու, նպատակով նախատեսվում է,

- աշխատողների կենցաղային կարիքները հոգալու, ինչպես նաև հրդեհաշիջման նպատակով ենթակայանի տարածքում կտեղադրվի 2 հատ 2 տ տարողությամբ ջրի բաք,
- շինհրապարակում կտեղադրվի պլաստիկ տարրա՝ հոսքաջրերի, անձրևաջրերի հեռացման և հավաքման նպատակով,



- պարզարանում առաջացած նստվածքը կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,
- ճանապարհների ջրցանն իրականացվելու է տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության,
- ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների լվացման համար կօգտագործվի տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, կամ օգտագործվելու է պարզարանի ջուրը,
- շինհրապարակում տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումից առաջացած շինարարական հոսքաջրերը կուղղորդվեն տարածքում տեղադրված բիոզուգարաններ,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համայնքում գործող մասնագիտացված կետերում,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների բետոնախատնիչ մեքենաներով՝ ըստ պահանջի,
- բետոնանյութի լցվածությունն ապահովել այնպես, որպեսզի բետոնանյութը տեղափոխման ժամանակ չթափվի ճանապարհներին՝ երթևեկությանը չխոչընդոտելու և հողաձածկը և ասֆալտաձածկը չվնասելու համար:
- աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով,
- աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները կհոգան սանիտարական հանգույցից (բիոզուգարան),
- արևային կայանի վահանակների մաքրում կամ լվացում չի նախատեսվում, խիստ անհրաժեշտության դեպքում այն կիրականացվի չոր եղանակով:
- խուսափել տարածքում վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների կուտակումից,
- նյութերի մնացորդները(մետաղական մասեր, մետաղալարեր և այլն) Կապալառու կազմակերպության կողմից հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և տեղափոխել,
- մետաղական մասերի և նյութերի մնացորդները հանձնվելու են համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին, դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար:

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու և վերահսկելու նպատակով իրականացվող գործընթաց է, գործընթացում մթնոլորտային օդում, ջրային ռեսուրսներում վնասակար նյութերի պարունակությունը վերահսկելու, ինչպես նաև թափոնների կառավարումը ճիշտ կազմակերպելու համար նախատեսված է իրականացնել մոնիթորինգ (մշտադիտարկումներ)՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված: Այդ նպատակով նախատեսվում է՝

- շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումների կիրառման հսկողություն,
- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում՝ շինարարական և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանման նպատակով,
- բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝ ամենօրյա ռեժիմով,
- ործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ պարբերաբար կատարել մոնիթորինգ առաջնորդվելով «Կառավարության 2014թ-ի հուլիսի 31-ին «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական



պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից՝ «Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլիացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով,

- տրանսպորտային միջոցների երթևեկության վերահսկում՝ դաշտային տարածքներում վերջիններիս տեղաշարժը վերահսկելու նպատակով: Շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումների իրականացում՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառելու նպատակով: Անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու նպատակով մշտական մոնիթորինգի իրականացում: Շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանման վերահսկողություն: Բարեկարգման աշխատանքների կատարման ապահովում, վերահսկում: Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի իրականացման համար նախատեսվում է տրամադրել տարեկան 250 000 ՀՀ դրամ:

**Պատճառաբանական մաս.** Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ բնակավայրի ղեկավարի նստավայրում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային լուծումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակումներում: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

### Փորձաքննական պահանջներ

1. Անհրաժեշտ է շինարարության և շահագործման փուլերում ապահովել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
2. Ազդակիր բնակավայրում ապահովել նախատեսվող սոցիալական ծրագրերի իրականացումը: Մինչ նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացումը՝ անցկացվող մալուխագծերի ճանապարհի հետ հատման լուծումները համաձայնեցնել համապատասխան կառույցների կամ մարմինների հետ:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Բաղրամյանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
4. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ նպատակային, գիտական, գեղարվեստական և այլ



մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:  
5. Գործունեության իրականացման ընթացքում ապահովել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված ՀՀ-ում գործող սանիտարական կանոնների և նորմերի պահանջների կատարումը:

## ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Սոլար ինվեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ բնակավայրի գործարանային փողոց 26/1 հասցեում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Ներիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Վարդան Հարությունյան